

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԿՈՂ
050.0227 Ն. 30.12.2025

30 դեկտեմբերի 2025 թվականի

թիվ 227-Ն

«ԿՐԻՊՏՈՂԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻ ԳՐԱՆՑՈՒՄՆ ՈՒ
ԼԻՑԵՆԶԻԱՎՈՐՈՒՄԸ, ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԿՐԻՊՏՈՂԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻ
ՄԱՍՆԱԾՅՈՒՂԻ ԵՎ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ
ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ, ԿՐԻՊՏՈՂԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ
ԿԱԴԻՏԱԼՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԶԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԱԽՆԱԿԱՆ
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԿԱՐԳԸ» ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 7/01-Ը ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նպատակ ունենալով սահմանել կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց
գործունեության թույլտվության կարգը, անհրաժեշտ տեղեկությունների և փաստաթղթերի ցանկը, ինչպես
նաև դրանց՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ներկայացման կարգը և ժամկետները,

հիմք ընդունելով «Կրիպտոակտիվների մասին» օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ և 8-րդ մասերը, 20-րդ
հոդվածի 2-րդ և 4-րդ մասերը, 22-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ մասերը, 25-րդ հոդվածի 5-րդ մասը, 26-րդ
հոդվածի 2-րդ մասը, 27-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 10-րդ մասերը, 28-րդ հոդվածի 3-րդ մասը, 94-րդ հոդվածի
2-րդ մասը,

դեկլարավելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի
3-րդ մասով, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
խորհուրդը

Որոշում է.

1. Սահմանել «Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի գրանցումն ու լիցենզավորումը,
օտարերկրյա կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի մասնաճյուղի և ներկայացուցչության
գործունեության թույլտվության տրամադրումը, կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի
կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար նախնական
համաձայնություն ստանալու կարգը» կանոնակարգ 7/01-ը՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ՝

Մ. Գալստյան

Երևան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական բանկի խորհրդի
2025 թվականի դեկտեմբերի 30-ի
թիվ 227-Ն որոշման

**«ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻ ԳՐԱՆՑՈՒՄՆ ՈՒ
ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ, ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻ
ՄԱՍՆԱԾՑՈՒԴԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ
ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ, ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ
ԿԱԴԻՏԱԼՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԱԽՆԱԿԱՆ
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԿԱՐԳԸ»**

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 7/01

ԳԼՈՒԽ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է.

1) կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի գրանցման և լիցենզավորման կարգը, փաստաթղթերի և տեղեկությունների բովանդակության նկատմամբ պահանջները,

2) կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի լիցենզիայի միասնական ձևը,

3) օտարերկրյա կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի (այսուհետ՝ նաև՝ օտարերկրյա անձ) մասնաճյուղի և ներկայացուցչության գործունեության թույլտվության տրամադրման կարգը, փաստաթղթերի և տեղեկությունների բովանդակության նկատմամբ պահանջները,

4) կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի, օտարերկրյա անձի մասնաճյուղի կողմից կրիպտոակտիվներով լրացուցիչ (ևս մեկ կամ ավել) ծառայության մատուցման լիցենզիայի, թույլտվության ստացման կարգը,

5) կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի և օտարերկրյա անձի մասնաճյուղի գործարար ծրագրի ձևը, ինչպես նաև՝ գործարար ծրագրի և դրանում կատարվող փոփոխությունների ներկայացման կարգը և ժամկետները,

6) կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի մասնաճյուղի և ներկայացուցչության ստեղծման մասին Կենտրոնական բանկին տեղեկացնելու կարգը,

7) կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեության դադարեցման, ինչպես նաև գործունեության ժամանակավոր դադարեցման կարգը և պայմանները,

8) կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեության իրականացման համար Կենտրոնական բանկի նախնական համաձայնության ստացման կարգը,

9) ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների, կարգավորվող շուկայի օպերատորի և կենտրոնական դեպոզիտարիայի կողմից կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցման թույլտվություն ստանալու կարգը և կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցման դադարեցման կարգը,

10) կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի լիցենզիան, օտարերկրյա անձի մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեության թույլտվությունը ուժը կորցրած կամ անվավեր ճանաչելու կարգը,

11) կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը,

12) կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի, օտարերկրյա անձի իրական շահառու հանդիսացող անձանց վերաբերյալ տեղեկությունների ներկայացման կարգը,

13) կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի, օտարերկրյա անձի մասնաճյուղի կողմից պարբերաբար ներկայացվող՝ փոխկապակցված և նշանակալից մասնակիցների վերաբերյալ հաշվետվությունները և տեղեկությունները,

14) կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի, օտարերկրյա անձի մասնաճյուղի և կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի մասնաճյուղի գործունեության տարածքի նկատմամբ պահանջները,

15) սույն կանոնակարգի համաձայն ներկայացվող փաստաթղթերի և տեղեկությունների փոփոխությունները Կենտրոնական բանկ ներկայացնելու կարգը:

2. Սույն կանոնակարգով պահանջվող բոլոր փաստաթղթերը Կենտրոնական բանկ են ներկայացվում Էլեկտրոնային տարբերակով՝ ՍԻ-ԲԻ-ԷՅ-ՆԵՔ համակարգի միջոցով, իսկ անհնարինության դեպքում՝ Էլեկտրոնային կրիչով և ուղեկցող գրությամբ, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ պահպանվող տեղեկությունների՝ որոնք կարող են ներկայացվել նաև առձեռն Կենտրոնական բանկ մուտքագրելու միջոցով: Ընդ որում, փաստաթղթերը ներկայացվում են հայերեն, ՅՈՒՆԻԿՈԴ տառատեսակով, «ՓԻ ԴԻ ԷՓ» ֆորմատով, բացառությամբ՝ գործարար ծրագրին կից աղյուսակների, որոնք ներկայացվում են էքսել ֆորմատով:

3. Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի, օտարերկրյա անձի մասնաճյուղի կանոնադրությունները (դրանցում կատարվող փոփոխությունները, լրացումները) Կենտրոնական բանկ են ներկայացվում Կենտրոնական բանկի կողմից տրամադրված էլեկտրոնային-թվային ստորագրությամբ:

4. Նոր ստեղծվող կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձինք, ինչպես նաև օտարերկրյա անձի նոր ստեղծվող մասնաճյուղերի վրա սույն կանոնակարգի 3-րդ կետով սահմանված պահանջը տարածվում է Կենտրոնական բանկի կողմից էլեկտրոնային-թվային ստորագրություն ստանալու պահից: Ընդ որում, սույն կետով նախատեսված անձինք, երբ արդեն միացված են ՍԻ-ԲԻ-Էյ-Նեթ համակարգին և ստացել են անվտանգության համապատասխան հավաստագրերը, Կենտրոնական բանկի կողմից գրանցված կանոնադրությունները կրկին ներկայացնում են Կենտրոնական բանկ ՍԻ-ԲԻ-Էյ-Նեթ համակարգի միջոցով «ՓԻ ԴԻ ԷՖ» ֆորմատով, էլեկտրոնային-թվային ստորագրությամբ՝ համապատասխան ստորագրությունն ստանալու օրվանից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում:

5. Սույն կանոնակարգով սահմանված փաստաթղթերը, ինչպես նաև ի լրումն ներկայացվող փաստաթղթերն ու տեղեկությունները Կենտրոնական բանկ են ներկայացվում կից միջնորդագրով (դիմումով)՝ կառավարման իրավասու մարմնի կողմից ստորագրված: Կենտրոնական բանկ ներկայացվող միջնորդագրում (դիմումում), բացառությամբ սույն կանոնակարգի հավելվածներով սահմանված միջնորդագրերի ձևերի, միջնորդագիրը (դիմումը) ստորագրող անձը նշում է, որ կից ներկայացվող փաստաթղթերն ու տեղեկությունները արժանահավատ են և ամբողջական և գիտակցում է, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը կարող է հանգեցնել միջնորդագրի (դիմումի) մերժմանը:

6. Սույն կանոնակարգով սահմանված փաստաթղթերը ներկայացուցչի միջոցով ներկայացնելու դեպքում ներկայացվում է նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նրան տրված լիազորագիրը:

7. Էլեկտրոնային եղանակով ներկայացվող միջնորդագրի (դիմումի) ֆայլի անվանումը պետք է ունենա հետևյալ կառուցվածքը.

կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի անվանումը	գծիկ	Փաստաթղթի տեսակը	գծիկ	Փաստաթղթի բովանդակությունը (12 տառի սահմաններում)	գծիկ	ամսաթիվ՝ օօսաատու ֆորմատով	կետ	Ֆայլի հապավումը
--	------	------------------	------	---	------	----------------------------	-----	-----------------

8. Օտարալեզու փաստաթղթերը ներկայացվում են կառավարման իրավասու մարմնի կողմից հաստատված, նոտարական կարգով վավերացված կամ լիցենզավորված թարգմանչի կողմից թարգմանված հայերեն թարգմանության հետ, ընդ որում՝ հայերեն և օտարալեզու փաստաթղթերի միջև հակասության կամ անհամապատասխանության դեպքում՝ նախապատվությունը տրվում է հայերեն տարբերակին: Օտարալեզու այն փաստաթղթերը, որոնց բնօրինակը անգլերեն կամ ռուսերեն է, կարող է ներկայացվել առանց թարգմանության, բացառությամբ այն դեպքերի, երբ Կենտրոնական բանկը պահանջում է դրանց հայերեն թարգմանությունները:

9. Սույն կանոնակարգի համաձայն Կենտրոնական բանկ ներկայացված փաստաթղթերում ոչ էական թերությունների (վրիպակներ, ոչ իրավական բնույթի անճշտություններ, թվաբանական սխալներ կամ նման այլ բացթողումներ) առկայության դեպքում՝ թերությունների մասին Կենտրոնական բանկը տեղեկացնում է դիմումը ներկայացրած անձին՝ միջնորդագրում նշված կոնտակտային տվյալների միջոցով և Կենտրոնական բանկի կողմից համապատասխան որոշումը կայացվում է այդ թերությունները վերացնելուց հետո: Փաստաթղթերի կրկին թերի ներկայացումը կարող է հիմք հանդիսանալ միջնորդագրի (դիմումի) մերժման համար:

10. Սույն կանոնակարգով սահմանված լիցենզավորման, գրանցման, նախնական համաձայնության ստացման, թույլտվության ստացման, ինչպես նաև սույն կանոնակարգի համաձայն Կենտրոնական բանկի կողմից ընդունվող այլ որոշումների համար «Կրիպտոակտիվների մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված ժամկետների հաշվարկն սկսվում է բոլոր պահանջվող փաստաթղթերը պատշաճ ձևով Կենտրոնական բանկ ներկայացնելու պահից:

11. Սույն կանոնակարգով սահմանված լիցենզավորման, գրանցման, նախնական համաձայնության ստացման, թույլտվության ստացման կամ տեղեկացման համար սույն կանոնակարգի համաձայն ներկայացման ենթակա այն տեղեկատվությունը, որը նախկինում՝ տվյալ կամ այլ գործընթացի շրջանակներում, արդեն ներկայացվել է Կենտրոնական բանկ, կրկին Կենտրոնական բանկ ներկայացվում է միայն փոփոխված լինելու դեպքում՝ փոփոխությունների մասով: Ընդ որում, սույն կետի համաձայն համապատասխան փոփոխությունները չներկայացվելու կամ միայն փոփոխությունների մասով ներկայացվելու դեպքում միջնորդագրում (դիմումում) նշվում է այդ մասին՝ ներկայացնելով, թե ինչ գործընթացի շրջանակում և երբ են ներկայացվել փոփոխությունները:

12. Եթե սույն կանոնակարգով պահանջվող փաստաթղթերով ներկայացված տեղեկատվությունը մինչև համապատասխան գործընթացով որոշման կայացումը փոխվել է, ապա տեղեկատվության փոփոխության կայացումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, փոփոխված փաստաթուղթը պետք է ներկայացվի Կենտրոնական բանկ:

13. Սույն կանոնակարգով սահմանված դեպքերում միջազգային վարկանշող կազմակերպությունների կողմից տրված վարկանիշերը կիրառվում են հետևյալ սկզբունքով, եթե այլ բան նախատեսված չէ սույն կանոնակարգով.

1) եթե կազմակերպությունն ունի սույն կանոնակարգում նշված միայն մեկ վարկանշող կազմակերպության կողմից տրված վարկանիշ, ապա հիմք է ընդունվում միայն տվյալ վարկանիշը,

2) եթե կազմակերպությունն ունի երկու տարբեր վարկանիշ՝ տրամադրված սույն կանոնակարգում նշված տարբեր վարկանշող կազմակերպությունների կողմից, ապա հիմք է ընդունվում ամենացածր վարկանիշը,

3) եթե կազմակերպությունն ունի երեք և ավելի վարկանիշ՝ տրամադրված սույն կանոնակարգում նշված տարբեր վարկանշող կազմակերպությունների կողմից, ապա հիմք է ընդունվում երկու ամենաբարձր վարկանիշերից առավել ցածր վարկանիշը:

14. Սույն կանոնակարգով պահանջվող ֆինանսական հաշվետվությունները պետք է կազմված լինեն.

1) «Հաշվապահական հաշվառման մասին» օրենքով սահմանված ստանդարտներին համապատասխան, կամ

2) օտարերկրյա իրավաբանական անձանց դեպքում՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների կամ միջազգայնորեն ճանաչված այլ ստանդարտների համապատասխան:

15. Կենտրոնական բանկը սույն կանոնակարգով պահանջվող տեղեկությունների և հաշվետվությունների պարզաբանման և մեկնաբանման կարիք ունեցող կետերի վերաբերյալ, ինչպես նաև առանձին վերլուծական կամ վերահսկողական նպատակներից ելնելով, կարող է պահանջել լրացուցիչ տեղեկություններ և պարզաբանումներ:

16. Կենտրոնական բանկի կողմից Օրենքի համաձայն՝ դիմումի, միջնորդագրի կամ ցանկացած այլ միջնորդության քննության ժամկետի կասեցման դեպքում քննության վերսկսման որոշման պահից քննության ժամկետը չպետք է գերազանցի մինչև կասեցումն ընկած օրերի և քննության համար սահմանված ժամկետի տարբերությամբ առաջացող օրերի քանակը:

17. Կանոնադրական կապիտալի մուծումը կամ կանոնադրական կապիտալի ավելացումն առաջին անգամ Կենտրոնական բանկում բացվող կուտակային հաշվի միջոցով իրականացնելու դեպքում Կենտրոնական բանկ է ներկայացվում կուտակային հաշիվ բացելու վերաբերյալ դիմում՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 9-ի, ինչպես նաև՝ կուտակային հաշվի բացման համար վճարման անդորրագիրը:

ԳԼՈՒԽ 2

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

18. Սույն կանոնակարգում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.

1) **Ֆինանսական խումբ**՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտ 10՝ «Համախմբված ֆինանսական հաշվետվություններ» ստանդարտով կամ միջազգայնորեն ընդունված այլ ստանդարտով սահմանված դեպքերում համախմբված ֆինանսական հաշվետվություններ ներկայացնող սուբյեկտ,

2) **Ֆինանսական հաշվետվություններ**՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն, Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն, Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն, Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն, ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ,

3) **Ֆինանսական վիճակի վատթարացում**՝ կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի ֆինանսական վիճակի առկա կամ հնարավոր վատթարացում են համարվում այն դեպքերը, երբ.

ա. կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը խախտել է հիմնական տնտեսական նորմատիվները կամ առկա է հիմնական տնտեսական նորմատիվների խախտման մեծ հավանականություն,

բ. կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի մոտ առկա է մեծ հավանականություն, որ կառաջանան «Բանկերի, ներդրումային ընկերությունների, կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց, ներդրումային ֆոնդի կառավարիչների, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» օրենքի 2-րդ հոդվածում սահմանված անվճարունակության հիմքերը:

19. Սույն կանոնակարգում օգտագործված այլ հասկացությունները կիրառվում են Օրենքով սահմանված իմաստով:

ԳԼՈՒԽ 3

ԿՐԻՊՏՈՒԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՅՈՒՆԸ

20. Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի գրանցման և լիցենզավորման համար Կենտրոնական բանկն են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը.

1) Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասով պահանջվող փաստաթղթերը, ընդ որում.

ա. գրանցման և լիցենզավորման դիմումը ներկայացվում է՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 5-ի,

բ. դիմորդի գործարար ծրագիրը (Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 10-րդ կետերով սահմանված ծառայությունների մատուցման դեպքում) ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 7-ի,

գ. դիմորդի իրավասու կառավարման մարմնի կողմից հաստատված կանոնադրությունը պետք է ունենա սույն կանոնակարգի Հավելված 8-ով սահմանված ձևի տիտղոսաթերթ,

դ. դիմորդի ֆիրմային անվանման գրանցման հայտը ներկայացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 309-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գրանցվող ֆինանսական կազմակերպությունների ֆիրմային անվանումների գրանցման հայտին ներկայացվող պահանջները, հայտի հետ ներկայացվող փաստաթղթերի ցանկը, ինչպես նաև հայտի քննարկման ու ֆիրմային անվանումների և դրա փոփոխությունների գրանցման կարգի» պահանջների,

ե. Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված կանոնների նախագծերը ներառում են առնվազն Օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված գործունեության կանոնները, ինչպես նաև այն կանոնների, կանոնակարգերի, ընթացակարգերի, քաղաքականությունների նախագծերը, որոնք պահանջվում են օրենսդրությամբ՝ կախված անձի կողմից մատուցվող ծառայությունների տեսակներից,

զ. կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի ղեկավարների գրանցման համար պահանջվող փաստաթղթերը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2025 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 229-Ն որոշմամբ հաստատված «Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց, օտարերկրյա կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց մասնաճյուղերի ղեկավարների գրանցման կարգը» կանոնակարգ 7/05-ի (այսուհետ՝ Կանոնակարգ 7/05),

ը. դիմորդի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար նախնական համաձայնություն ստանալու համար ներկայացվում են սույն կանոնակարգի 13-րդ և 14-րդ գլուխներով սահմանված փաստաթղթերը,

2) կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի ստեղծման մասին հիմնադիր պայմանագիրը (որոշումը),

3) դիմորդի հիմնադիրների վերաբերյալ տեղեկությունները՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 11-ի,

4) դիմորդի հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկություններ՝ համաձայն սույն կանոնակարգի՝ համապատասխանաբար Հավելված 12-ի և Հավելված 13-ի,

5) Կենտրոնական բանկի պահանջով՝ դիմորդի հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկություններ՝ համաձայն սույն կանոնակարգի՝ համապատասխանաբար Հավելված 12-ի և Հավելված 13-ի,

6) դիմորդի հետ փոխկապակցված իրավաբանական անձանց վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները, իսկ մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում՝ իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար և դրանց անկախ աուդիտորական եզրակացությունը՝ առկայության դեպքում,

7) Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 8-րդ կետերով սահմանված ծառայությունների մատուցման դեպքում՝ հիմնավորումներ այն մասին, որ կրիպտոակտիվների փաթեթի կառավարում իրականացնող և կրիպտոակտիվների հետ կապված խորհրդատվություն տրամադրող աշխատակիցները ունեն բավարար գիտելիքներ և փորձ իրենց պարտականությունները կատարելու համար,

8) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2025 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 228-Ն որոշմամբ հաստատված «Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց ընդհանուր կապիտալի նվազագույն սահմանաչափերը, հաշվարկման կարգը, հաշվարկում մասնակցող և հաշվարկից նվազեցվող տարրերը» կանոնակարգ 7/02-ով (այսուհետ՝ Կանոնակարգ 7/02) սահմանված՝ ընդհանուր կապիտալի պահանջի բավարարումը հիմնավորող փաստաթղթեր, մասնավորապես՝ Կենտրոնական բանկում կամ Հայաստանի Հանրապետությունում գործող դիմորդի հետ չփոխկապակցված որևէ այլ բանկում կանոնադրական կապիտալի համալրման նպատակով բացված կուտակային հաշվում առկա միջոցների փաստացի մեծությունը հավաստող տեղեկանք,

9) Եթե դիմորդը գրանցվում է որպես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, ապա ներկայացվում է նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի հուլիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գրանցվող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն հանդիսացող կազմակերպությունների մասնակիցների գրանցամատյանի վարման կարգ» թիվ 206-Ն որոշմամբ պահանջվող փաստաթղթերը:

21. Սույն կանոնակարգի 20-րդ կետի 4-րդ ենթակետերով սահմանված տեղեկությունները չեն ներկայացվում այն անձանց համար, որոնք հանդիսանում են.

1) դիմորդի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձ, և որոնց համար ներկայացվում են սույն կանոնակարգով նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի համար պահանջվող փաստաթղթերը (տեղեկությունները),

2) Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձ՝ բացառությամբ հաշվետու թողարկողների,

3) միջազգային կազմակերպություն,

4) Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնության առկայության դեպքում՝ միջազգային համբավ կամ Ստանդարտ և Փուլը կամ Ֆիտչ վարկանշող կազմակերպությունների կողմից սահմանված «A-» կամ ավելի բարձր կամ Մուդիզ վարկանշող կազմակերպության կողմից «A3» կամ ավելի բարձր վարկանիշ ունեցող կազմակերպություններ:

22. Սույն կանոնակարգի 20-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված տեղեկությունները չեն ներկայացվում այն անձանց համար, որոնք հանդիսանում են.

1) դիմորդի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձ, և որոնց համար ներկայացվում են սույն կանոնակարգով նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի համար պահանջվող փաստաթղթերը (տեղեկությունները),

2) Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձ՝ բացառությամբ հաշվետու թողարկողների:

23. Եթե դիմորդի հետ փոխկապակցված իրավաբանական անձինք ընդգրկված են որևէ խմբի կամ ցանկացած այլ ինքնուրույն ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, ապա սույն կանոնակարգի 20-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված տեղեկությունների փոխարեն ներկայացվում են սույն կետում նշված հաշվետվությունը (տեղեկությունները).

1) խմբի կառուցվածքը,

2) խմբի վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները, իսկ մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք Նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար և դրանց անկախ աուդիտորական եզրակացությունը՝ առկայության դեպքում:

24. Միևնույն խմբում կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում այլ փոխկապակցված անձի կամ Նշանակալից մասնակցի առկայության դեպքում սույն կանոնակարգի 23-րդ կետով պահանջվող հաշվետվությունը (տեղեկությունները) ներկայացնում է նրանցից որևէ մեկը:

25. Կենտրոնական բանկը կարող է դիմորդի լիցենզավորման գործընթացի ժամանակ դիմորդի հետ փոխկապակցված անձանց հետ փոխկապակցված իրավաբանական անձանց վերաբերյալ պահանջել սույն կանոնակարգի 20-րդ կետի 6-րդ ենթակետերով սահմանված տեղեկատվությունը, իսկ եթե դիմորդի հետ փոխկապակցված անձանց հետ փոխկապակցված իրավաբանական անձը ընդգրկված է որևէ խմբի կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, ապա նաև սույն կանոնակարգի 23-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները):

26. Եթե սույն կանոնակարգի 20-րդ կետի 6-րդ ենթակետով կամ սույն կանոնակարգի 23-րդ կետով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները) տեղադրված են, համապատասխանաբար, իրավաբանական անձի կամ խմբի ինտերնետային կայքում, ապա Կենտրոնական բանկին ներկայացվում է համապատասխան կայքի (տնային էջի) հասցեն:

27. Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի լիցենզիան տրվում է էլեկտրոնային եղանակով, որը Կենտրոնական բանկը հրապարակում է իր պաշտոնական ինտերնետային կայքում՝ համաձայն սույն կանոնակարգի 3-րդ կետի 1-ի: Ընդ որում, լիցենզիայում նշվում են նաև այն ծառայությունները, որոնց մատուցման համար դիմորդը ստացել է լիցենզիան:

28. Իրավաբանական անձինք, որոնք Օրենքի ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում մատուցել են Օրենքի 16-րդ հոդվածով նախատեսված ծառայություններ, Կենտրոնական բանկի կողմից գրանցվելու և լիցենզավորվելու համար Կենտրոնական բանկ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) սույն կանոնակարգի 20-րդ կետով սահմանված փաստաթղթերը, բացառությամբ՝ 1-ին կետի «դ» ենթակետի, 2-րդ, 3-րդ և 8-րդ կետերի,

2) դիմորդի բաժնետերերի ռեեստրից կամ մասնակիցների գրանցամատյանից քաղվածք,

3) Օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված գործառնությունների պատվիրակման դեպքում՝ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով սահմանված՝ գործառնությունների պատվիրակմանը նախկան կանոնակարգի 16-րդ հոդվածով սահմանված փաստաթղթերը,

4) Կանոնակարգ 7/02-ով սահմանված՝ ընդհանուր կապիտալի պահանջի բավարարումը հիմնավորող փաստաթղթեր, ինչպես նաև՝ դիմորդի ֆինանսական հաշվետվությունները և դրանց անկախ աուդիտորական եզրակացությունը՝ առկայության դեպքում: Ընդ որում, եթե գրանցման և լիցենզավորման դիմելու պահի դրությամբ դիմորդի ընդհանուր կապիտալը չի բավարարում Կանոնակարգ 7/02-ով սահմանված կապիտալի նվազագույն սահմանաչափերին, ապա ներկայացվում է նաև Կենտրոնական բանկում կամ Հայաստանի Հանրապետությունում գործող դիմորդի հետ չփոխկապակցված որևէ այլ բանկում՝ Կանոնակարգ 7/02-ով սահմանված ընդհանուր կապիտալի պահանջը բավարարելու համար կանոնադրական կապիտալի համալրման նպատակով բացված կուտակային հաշվում առկա միջոցների փաստացի մեծությունը հավաստող տեղեկանք՝ առնվազն տարբերության չափով և դիմորդի կառավարման իրավասու մարմնի որոշումը՝ Կենտրոնական բանկի կողմից գրանցվելու և լիցենզավորվելու դեպքում կանոնադրական կապիտալը համալրելու վերաբերյալ,

5) դիմորդի կառավարման իրավասու մարմնի կողմից հաստատված՝ Նոր խմբագրությամբ կանոնադրությունը, որը պետք է ունենա սույն կանոնակարգի 3-րդ կետի 8-ով սահմանված ձևի տիտղոսաթերթ,

6) դիմորդի՝ ապակենտրոնացված գրանցամատյանում բացված հասցեները՝ համաձայն Հավելված 10-ի: Ընդ որում, եթե դիմորդը կրիպտոակտիվներ ստանալու համար գեներացնում է բազմաթիվ հասցեներ և այդ հասցեները օգտագործվում են միայն մեկ անգամ կամ մեկ հաճախորդի կողմից՝ կրիպտոակտիվներ ընդունելու և հիմնական պահառուական հասցեներ փոխանցելու համար, ապա ներկայացվում են միայն հիմնական պահառուական հասցեները:

29. Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի գրանցման վկայականը տրվում է էլեկտրոնային եղանակով՝ համաձայն սույն կանոնակարգի 3-րդ կետի 3-ի:

ԳԼՈՒԽ 4

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾԵՐՈՒ ՄԱՍՆԱԶՅՈՒՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱԳՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

30. Օտարերկրյա անձը Հայաստանի Հանրապետության տարածքում մասնաճյուղի գործունեության թույլտվություն ստանալու համար Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) Օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասով պահանջվող փաստաթղթերը, ընդ որում.

ա. մասնաճյուղի գործունեությանը թույլտվություն տրամադրելու վերաբերյալ դիմումը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի 3-րդ կետի 6-ի,

բ. մասնաճյուղի գործարար ծրագիրը Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 10-րդ կետերով սահմանված ծառայությունների մատուցման դեպքում ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 7-ի,

գ. օտարերկրյա անձի իրավասու կառավարման համապատասխան մարմնի կողմից հաստատված մասնաճյուղի կանոնադրությունը պետք է ունենա սույն կանոնակարգի Հավելված 8-ով սահմանված ձևի տիտղոսաթերթ,

դ. Օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետով նախատեսված կանոնների նախագծերը ներառում են առնվազն Օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված գործունեության կանոնները,

ե. օտարերկրյա անձի մասնաճյուղի ղեկավարների գրանցման համար պահանջվող փաստաթղթերը՝ համաձայն Կանոնակարգ 7/05-ի,

Է. օտարերկրյա անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց վերաբերյալ տեղեկանքը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 14-ի,

2) օտարերկրյա անձի ապակենտրոնացված գրանցամատյանում բացված հասցեները՝ համաձայն հավելված 10-ի: Ընդ որում, եթե կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը կրիպտոակտիվներ ստանալու համար գներացնում է բազմաթիվ հասցեներ և այդ հասցեները օգտագործվում են միայն մեկ անգամ կամ մեկ հաճախորդի կողմից՝ կրիպտոակտիվներ ընդունելու և հիմնական պահառուական հասցեներ փոխանցելու համար, ապա ներկայացվում են միայն հիմնական պահառուական հասցեները,

3) օտարերկրյա անձի հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկություններ՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 12-ի և Հավելված 13-ի,

4) Կենտրոնական բանկը կարող է պահանջել օտարերկրյա անձի հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկություններ՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 12-ի և Հավելված 13-ի,

5) օտարերկրյա անձի հետ փոխկապակցված իրավաբանական անձանց վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները, իսկ մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում՝ իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար և դրանց անկախ աուդիտորական եզրակացությունը՝ առկայության դեպքում,

6) օտարերկրյա անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական անձանց համար սույն կանոնակարգի 60-րդ կետի 2-րդ, 4-րդ և 5-րդ ենթակետերով սահմանված փաստաթղթերը, իսկ նշանակալից մասնակցություն ունեցող ֆիզիկական անձանց համար սույն կանոնակարգի 64-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերը,

7) մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա անձի կողմից տրված պարտավորագիր (երաշխավորագիր)՝ Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա անձի մասնաճյուղի կողմից այդ մասնաճյուղի գործունեությունից բխող պարտավորությունները չկատարելու դեպքում այդ պարտավորությունները օտարերկրյա անձի կողմից առանց որևէ պայմանի (նախապայմանի) անհապաղ կատարելու վերաբերյալ,

8) մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա անձի գրանցման երկրի կրիպտոակտիվների ոլորտի վերահսկողություն իրականացնող մարմնի կողմից տրված հավաստումն առ այն, որ օտարերկրյա անձը չի խախտել տվյալ երկրի կրիպտոակտիվների ոլորտի գործունեության կարգավորումը կամ վերահսկողությունն իրականացնող մարմնի կողմից սահմանված տնտեսական նորմատիվների պահանջները սույն կետում նշված դիմումը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվան նախորդող երկու տարվա ընթացքում, իսկ եթե մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա անձի գործունեությունը պակաս է երկու տարուց, ապա՝ գործունեության ողջ ընթացքում,

9) Կենտրոնական բանկում կամ Կենտրոնական բանկի համաձայնությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող որևէ բանկում մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա անձի անունով ավանդի ներդրումը հավաստող փաստաթղթեր: Ընդ որում, սույն ենթակետով սահմանված ավանդը պետք է առնվազն կազմի

ա. 4 000 000 Հայաստանի Հանրապետության դրամ կամ ավանդը ներդրվելու օրվա դրությամբ 4 000 000 Հայաստանի Հանրապետության դրամին համարժեք արտարժույթ, եթե օտարերկրյա անձը դիմել է կրիպտոակտիվների հետ կապված խորհրդատվության տրամադրման լիցենզիա ստանալու համար,

բ. 8 000 000 Հայաստանի Հանրապետության դրամ կամ ավանդը ներդրվելու օրվա դրությամբ 8 000 000 Հայաստանի Հանրապետության դրամին համարժեք արտարժույթ, եթե օտարերկրյա անձը դիմել է հաճախորդի հաշվին կրիպտոակտիվներով առքուվաճառքի իրականացման, կրիպտոակտիվներով գործարքների կատարման հանձնարարականների ընդունման և հաղորդման, կրիպտոակտիվների տեղաբաշխման, կրիպտոակտիվների փաթեթի կառավարման կամ կրիպտոակտիվների փոխանցման մատուցման լիցենզիա ստանալու համար,

գ. 20 000 000 Հայաստանի Հանրապետության դրամ կամ ավանդը ներդրվելու օրվա դրությամբ 20 000 000 Հայաստանի Հանրապետության դրամին համարժեք արտարժույթ, եթե օտարերկրյա անձը դիմել է կրիպտոակտիվների պահառության կամ իր հաշվին կրիպտոակտիվներով առքուվաճառքի իրականացման լիցենզիա ստանալու համար,

դ. 28 000 000 Հայաստանի Հանրապետության դրամ կամ ավանդը ներդրվելու օրվա դրությամբ 28 000 000 Հայաստանի Հանրապետության դրամին համարժեք արտարժույթ, եթե օտարերկրյա անձը դիմել է կրիպտոակտիվների առևտրային հարթակի գործարկման լիցենզիա ստանալու համար,

ե. 80 000 000 Հայաստանի Հանրապետության դրամ կամ ավանդը ներդրվելու օրվա դրությամբ 80 000 000 Հայաստանի Հանրապետության դրամին համարժեք արտարժույթ, եթե օտարերկրյա անձը դիմել է ակտիվին կցված թոքենի թողարկման լիցենզիա ստանալու համար,

զ. միաժամանակ մի քանի տեսակի ծառայությունների մատուցման թույլտվություն ստանալու համար դիմած օտարերկրյա անձի կողմից ներդրված ավանդի մեծությունը պետք է բավարարի սույն ենթակետով տվյալ կրիպտոակտիվներով ծառայության համար սահմանված չափերից առավելագույնին,

Է. սույն ենթակետով սահմանված ավանդի պայմանագրով պետք է նախատեսված լինի, որ ավանդը ավանդատուի պահանջով ենթակա է վերադարձման բացառապես Կենտրոնական բանկի նախնական համաձայնության դեպքում: Միևնույն ժամանակ, մասնաճյուղը ստեղծող օտարերկրյա անձը ստանձնել է անվերապահ պարտավորություն, համաձայն որի՝ այն դեպքում, երբ օրենքի համաձայն, ավանդի գումարը ենթակա է անվերապահ վերադարձման՝ անկախ կողմերի համաձայնությունից, վերադարձված գումարը համապատասխան բանկից ստանալուց հետո պարտավոր է 5 աշխատանքային օրվա ընթացքում որպես ավանդ մուծել Կենտրոնական բանկում կամ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող այլ բանկում՝ սույն ենթակետով սահմանված պայմաններով,

ը. սույն ենթակետով սահմանված ավանդը արտարժույթով ներդնելու դեպքում օտարերկրյա անձը պետք է ապահովի, որպեսզի արտարժույթով ավանդը համարժեք լինի նախատեսված սահմանաչափերիս առնվազն յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ:

31. Սույն կանոնակարգի 30-րդ կետի 3-րդ ենթակետերով սահմանված տեղեկությունները չեն ներկայացվում այն անձանց համար, որոնք հանդիսանում են.

- 1) Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձ՝ բացառությամբ հաշվետու թողարկողների,
- 2) միջազգային կազմակերպություն,

3) Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնության առկայության դեպքում՝ միջազգային համբավ կամ Ստանդարտ և Փորձ կամ Ֆիտչ վարկանշող կազմակերպությունների կողմից սահմանված «A-» կամ ավելի բարձր կամ Մուդիզ վարկանշող կազմակերպության կողմից «A3» կամ ավելի բարձր վարկանիշ ունեցող կազմակերպություններ:

32. Սույն կանոնակարգի 30-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված տեղեկությունները չեն ներկայացվում այն անձանց համար, որոնք հանդիսանում են.

1) օտարերկրյա անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձ, որոնց համար ներկայացվում են սույն կանոնակարգով նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի համար պահանջվող փաստաթղթերը (տեղեկությունները),

2) Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձ՝ բացառությամբ հաշվետու թողարկողների:

33. Օտարերկրյա անձը Կենտրոնական բանկ է ներկայացնում սույն կանոնակարգի 32-րդ կետով նշված փոխկապակցված իրավաբանական անձանց անվանումները, գրանցման համարները և գտնվելու վայրերը:

34. Եթե օտարերկրյա անձի հետ փոխկապակցված իրավաբանական անձինք ընդգրկված են որևէ խմբի կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, ապա սույն կանոնակարգի 30-րդ կետի 5-րդ ենթակետերով սահմանված տեղեկությունների փոխարեն ներկայացվում են սույն կետում նշված հաշվետվությունը (տեղեկությունները).

1) խմբի կառուցվածքը,

2) խմբի վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները (մեկ տարուց պակաս գործունեություն իրավաբանական իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար) և դրանց անկախ աուդիտորական եզրակացությունը՝ առկայության դեպքում:

35. Միևնույն խմբում կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում այլ փոխկապակցված անձի կամ նշանակալից մասնակցի առկայության դեպքում սույն կանոնակարգի 34-րդ կետով պահանջվող հաշվետվությունը (տեղեկությունները) ներկայացնում է նրանցից որևէ մեկը:

36. Կենտրոնական բանկը կարող է օտարերկրյա անձի հետ փոխկապակցված անձանց հետ փոխկապակցված իրավաբանական անձանց մասով պահանջել սույն կանոնակարգի 30-րդ կետի 5-րդ ենթակետերով, իսկ եթե օտարերկրյա անձի հետ փոխկապակցված անձանց հետ փոխկապակցված իրավաբանական անձը ընդգրկված է որևէ խմբի կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, ապա նաև՝ սույն կանոնակարգի 34-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները):

37. Եթե սույն կանոնակարգի 30-րդ կետի 5-րդ ենթակետով կամ սույն կանոնակարգի 34-րդ կետով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները) տեղակայված են, համապատասխանաբար, իրավաբանական անձի կամ խմբի ինտերնետային կայքում, ապա Կենտրոնական բանկին ներկայացվում է համապատասխան կայքի (տնային էջի) հասցեն:

38. Կենտրոնական բանկի կողմից օտարերկրյա անձի մասնաճյուղին տրամադրվում է թույլտվություն, եթե Կենտրոնական բանկի և մասնաճյուղը ստեղծող օտարերկրյա անձի գրանցման երկրի կրիպտոակտիվների ոլորտի կարգավորումն ու վերահսկողությունն իրականացնող մարմնի միջև առկա է համաձայնագիր (փոխըմբռնման հուշագիր) կրիպտոակտիվների վերահսկողության ոլորտում համագործակցության վերաբերյալ:

39. Օտարերկրյա անձի մասնաճյուղի գործունեության թույլտվությունը տրվում է էլեկտրոնային եղանակով, որը Կենտրոնական բանկը հրապարակում է իր պաշտոնական ինտերնետային կայքում՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 2-ի: Ընդ որում, տրված գործունեության թույլտվությունում նշվում են նաև այն ծառայությունները, որոնց մատուցման համար օտարերկրյա անձը ստացել է թույլտվություն:

ԳԼՈՒԽ 5

ՕՏԱՐԵՐԿՐԻՅԱ ԱՆՃԻ ՆԵՐԿԱՅԱԳՈՒՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ

40. Օտարերկրյա անձը Հայաստանի Հանրապետության տարածքում ներկայացուցչության գործունեության թույլտվություն ստանալու համար Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) Օրենքի 22-րդ հոդվածի 6-րդ մասով պահանջվող փաստաթղթերը, ընդ որում.

ա. ներկայացուցչության գործունեությանը թույլտվություն տրամադրելու դիմումը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 16-ի, ընդ որում, դիմումում ներկայացվում է նաև ներկայացուցչություն բացելու հիմնավորումը,

բ. օտարերկրյա անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց վերաբերյալ տեղեկանքը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 14-ի,

2) տեղեկանք ներկայացուցչության ղեկավարի վերաբերյալ՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 15-ի:

41. Օտարերկրյա անձի ներկայացուցչության գործունեության թույլտվությունը տրվում է էլեկտրոնային եղանակով, որը Կենտրոնական բանկը հրապարակում է իր պաշտոնական ինտերնետային կայքում՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 4-ի:

ԳԼՈՒԽ 6

ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ, ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ

42. Գործող կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը կրիպտոակտիվներով լրացուցիչ (ևս մեկ կամ ավել) ծառայության մատուցման լիցենզիա ստանալու համար Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) Օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով պահանջվող փաստաթղթերը, ընդ որում.

ա. կրիպտոակտիվներով լրացուցիչ ծառայություն մատուցելու լիցենզիայի դիմումը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 17-ի,

բ. օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 10-րդ կետերով սահմանված ծառայությունների մատուցման դեպքում գործարար ծրագրում կատարված փոփոխությունները ներկայացվում են համաձայն սույն կանոնակարգի Հավելված 7-ի:

43. Օտարերկրյա անձի գործող մասնաճյուղը կրիպտոակտիվներով լրացուցիչ (ևս մեկ կամ ավել) ծառայություն մատուցելու թույլտվություն ստանալու համար Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) Օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասով պահանջվող փաստաթղթերը, ընդ որում.

ա. կրիպտոակտիվներով լրացուցիչ ծառայություն մատուցելու թույլտվության դիմումը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 17-ի,

բ. օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 10-րդ կետերով սահմանված ծառայությունների մատուցման դեպքում գործարար ծրագրում կատարված փոփոխությունները ներկայացվում են համաձայն սույն կանոնակարգի Հավելված 7-ի:

44. Օրենքով սահմանված կարգով, կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձին կամ օտարերկրյա անձին լրացուցիչ ծառայության մատուցման լիցենզիա կամ թույլտվություն տրամադրելու դեպքում, Կենտրոնական բանկի որոշման ընդունման պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկը կատարում է համապատասխան փոփոխություններն իր կայքում հրապարակված լիցենզիայի, մասնաճյուղի գործունեության թույլտվության մեջ:

ԳԼՈՒԽ 7

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՃԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍՏԵՂԾՎՈՂ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱԳՈՒՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆՄԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՑՈՒՄԸ

45. Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծվող մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեությունը սկսելուց առնվազն 15 աշխատանքային օր առաջ Կենտրոնական բանկին տեղեկացնում է՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 18-ի:

ԳԼՈՒԽ 8

ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱԳՈՒՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱՂԱՐԵՑՄԱՆ, ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԴԱՂԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԴԱՅՄԱՆՆԵՐԸ

46. Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեությունը դադարեցնելուց կամ ժամանակավոր դադարեցնելուց առնվազն 30 աշխատանքային օր առաջ Կենտրոնական բանկին տեղեկացնում է դրա մասին: Ընդ որում, տեղեկացումը ներառում է նաև

մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեության դադարեցման, ժամանակավոր դադարեցման ժամկետները և դադարեցման, ժամանակավոր դադարեցման հիմնավորումները:

47. Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեությունը դադարեցնելուց կամ ժամանակավոր դադարեցնելուց առնվազն 30 աշխատանքային օր առաջ մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեությունը դադարեցնելու մասին տեղեկատվությունը հրապարակում է իր ինտերնետային կայքում և սոցիալական ցանցի իր էջերում:

48. Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ստեղծված մասնաճյուղը կամ ներկայացուցչությունը այլ երկրի համապատասխան իրավասու մարմնի կողմից գրանցումից հանելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը Կենտրոնական բանկ է ներկայացնում այդ փաստը վկայող փաստաթուղթը:

ԳԼՈՒԽ 9

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾԵՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆԶԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾԵՒՑ ԴՈՒՐՍ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱՄ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅՉՈՒԹՅԱՆ ԱՏԵՂԾՈՒՄԸ

49. Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մասնաճյուղ ստեղծելիս Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը ստանալու համար Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) նախնական համաձայնություն ստանալու վերաբերյալ միջնորդագիրը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 19-ի,

2) կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ մասնաճյուղ բացելու վերաբերյալ,

3) մասնաճյուղի ղեկավարների վերաբերյալ տեղեկանք՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 15-ի,

4) կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ մասնաճյուղի ղեկավարներ նշանակելու մասին:

50. Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ներկայացուցչություն ստեղծելիս Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը ստանալու համար Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) նախնական համաձայնություն ստանալու վերաբերյալ միջնորդագիրը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 19-ի,

2) կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ ներկայացուցչություն բացելու մասին,

3) ներկայացուցչության ղեկավարների վերաբերյալ տեղեկանք՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 15-ի:

ԳԼՈՒԽ 10

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ, ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՏԱՆԱԼՈՒ ՀԱՍԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

51. Ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների, կարգավորվող շուկայի օպերատորի և կենտրոնական դեպոզիտարիայի կողմից կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցելու թույլտվություն ստանալու համար Կենտրոնական բանկ է ներկայացվում Օրենքի 27-րդ հոդվածի 1-րդ մասով պահանջվող փաստաթղթերը՝ ընդ որում.

ա. կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցման թույլտվություն ստանալու միջնորդագիրը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 20-ի,

բ. գործարար ծրագրում, կանոնադրության մեջ և գործունեության կանոններում կատարված փոփոխությունները ներկայացվում են ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների, կարգավորվող շուկայի օպերատորի և կենտրոնական դեպոզիտարիայի կողմից՝ համաձայն Կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 16-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ներդրումային ընկերությունների կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» Կանոնակարգ 4/01-ի, Կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 116-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ֆոնդի կառավարիչների և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի, ինչպես նաև ներդրումային ֆոնդի կառավարչի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների վերագրանցումը և վերալիցենզավորումը՝ որպես ներդրումային ֆոնդի կառավարիչ, ներդրումային ֆոնդի կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելը, ներդրումային ֆոնդի

կառավարիչների, դրանց մասնաճյուղերի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի կողմից գործարար ծրագրի, դրա փոփոխությունների և դրա իրականացման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» Կանոնակարգ 10/01-ի, Կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 17-Ն որոշմամբ հաստատված «Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» Կանոնակարգ 5/01-ի և Կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 14-Ն որոշմամբ հաստատված «Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցումն ու լիցենզավորումը, Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» Կանոնակարգ 5/02-ի համապատասխան դրույթների:

ԳԼՈՒԽ 11

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ, ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ԿՈՐՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ

52. Ներդրումային ընկերությունը, ներդրումային ֆոնդի կառավարիչը, կարգավորվող շուկայի օպերատորը և կենտրոնական դեպոզիտարիան (այսուհետ՝ սույն գլխում կազմակերպություն) կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցման դադարեցման թույլտվություն ստանալու նպատակով Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցման դադարեցումը թույլատրելու մասին միջնորդագիր՝ կազմակերպության կառավարման մարմնի կողմից լիազորված անձի ստորագրությամբ,
2) կազմակերպության կառավարման իրավասու մարմնի որոշումը՝ կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցումը դադարեցնելու մասին,

3) կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցման դադարեցման հիմնավորումները,
4) կազմակերպության կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցմանն առնչվող ակտիվների և պարտավորությունների փոխանցման ուղղությամբ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները, գործողությունները և դրանց կատարման ժամկետները:

53. Սույն կանոնակարգի 52-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու օրվան հաջորդող 30-օրյա ժամկետում Կենտրոնական բանկը որոշում է կայացնում թույլ տալ կազմակերպությանը դադարեցնել կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցումը կամ թույլ չտալ՝ մերժման հիմքերի մասին կազմակերպության տեղեկացնելով:

54. Կենտրոնական բանկի կողմից 30-օրյա ժամկետում միջնորդագիրը չմերժելու դեպքում կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցման դադարեցման թույլտվությունը համարվում է տրված:

55. Սույն կանոնակարգի 53-րդ կետով սահմանված որոշման ընդունման օրվան հաջորդող կամ սույն կանոնակարգի 54-րդ կետով նախատեսված դեպքում 30-օրյա ժամկետին հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում կազմակերպությունը կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցման դադարեցման մասին տեղեկատվությունը հրապարակում է իր ինտերնետային կայքում:

56. Կենտրոնական բանկի կողմից կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցման դադարեցման թույլտվության տրամադրման պահից սույն կանոնակարգի 52-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետում կազմակերպությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցմանն առնչվող ակտիվների և պարտավորությունների փոխանցումը հաստատող փաստաթուղթը:

57. Սույն կանոնակարգի 52-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետում կազմակերպության կողմից կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցմանն առնչվող ակտիվների և պարտավորությունների փոխանցումը հաստատող փաստաթուղթը Կենտրոնական բանկ չներկայացնելու դեպքում, Կենտրոնական բանկի՝ կազմակերպությանը կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցման թույլտվություն տալու որոշումն ուժը կորցրած է ճանաչվում:

ԳԼՈՒԽ 12

ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻ ԼԻՑԵՆԶԻԱՆ, ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԱՆՁԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱՄ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ԿԱՄ ԱՆՎԱԿԵՐ ՃԱՆԱՉԵԼԸ

58. Օրենքով սահմանված հիմքերով կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի լիցենզիան, օտարերկրյա անձի մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեության թույլտվությունն ամբողջությամբ ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու դեպքում, Կենտրոնական բանկի որոշման ընդունման պահից հիմա աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկն իր կայքից հեռացնում է կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի լիցենզիան, օտարերկրյա անձի մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեության թույլտվությունը:

59. Օրենքով սահմանված հիմքերով կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի լիցենզիան, օտարերկրյա անձի մասնաճյուղի գործունեության թույլտվությունն ըստ ծառայությունների առանձին տեսակների ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու դեպքում, Կենտրոնական բանկի որոշման ընդունման

պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկը կատարում է համապատասխան փոփոխություններն իր կայքում հրապարակված լիցենզիայի, մասնաճյուղի գործունեության թույլտվության մեջ:

ԳԼՈՒԽ 13

ԿՐԻՊՏՈՎԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՆՈՂ ԱՆՁԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՈՐԴՂԱԿԻ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՍՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՏՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

60. Իրավաբանական անձը նոր ստեղծվող կամ գործող կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցող անձի կանոնադրական կապիտալում ուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնությունն ստանալու համար համապատասխան կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի միջնորդությամբ Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) իրավաբանական անձի կողմից կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցության ձեռքբերման նախնական համաձայնությունն ստանալու դիմումը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 21-ի,

2) ոչ ռեզիդենտ իրավաբանական անձի ռեզիդենտության երկրի իրավասու մարմնի (դատական, վարչական կամ այլ իրավասու մարմին) կողմից տրված տեղեկանք, քաղվածք կամ այլ փաստաթուղթ, որը պետք է պարտադիր նշում պարունակի այն մասին, որ դիմելու պահին անձը դիտավորությամբ կատարված հանցագործության համար չունի օրենքով սահմանված կարգով չմարված կամ չվերացված դատվածություն և անձի նկատմամբ չկա հարուցված մնանկության վարույթ, կամ անձը դատարանի կամ այլ իրավասու մարմնի վերջնական որոշմամբ չի ճանաչվել սնանկ: Ընդ որում, սնանկ ճանաչված չլիներու հավաստման փոխարեն կարող է ներկայացվել սնանկ ճանաչված չլիներու մասին հայտարարություն, որը կատարվել է ոչ ռեզիդենտ անձի կողմից իրավասու դատական կամ վարչական մարմնի առջև կամ նոտարի մոտ՝ իր ռեզիդենտության երկրում,

3) իրավաբանական անձի կառավարման իրավասու մարմնի որոշումը տվյալ կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում ուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու մասին,

4) իրավաբանական անձի կանոնադրությունը՝ ոչ ռեզիդենտ նշանակալից մասնակցի դեպքում,

5) իրավաբանական անձի վերջին երեք տարիների (երեք տարուց պակաս գործունեությունն իրականացրած իրավաբանական անձի դեպքում՝ գործունեության ողջ ժամկետի համար) և վերջին միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները և վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունների անկախ աուդիտորական եզրակացությունը,

6) իր միջոցով անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի վերաբերյալ սույն կանոնակարգի 14-րդ գլխով սահմանված փաստաթղթերը, եթե տվյալ իրավաբանական անձի միջոցով որևէ այլ անձ կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ է ձեռք բերում,

7) իրավաբանական անձի հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկանք՝ համաձայն սույն կանոնակարգի՝ համապատասխանաբար Հավելված 22-ի և Հավելված 23-ի:

61. Եթե իրավաբանական անձը ընդգրկված է որևէ խմբի կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, ապա սույն կանոնակարգի 60-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված տեղեկությունների փոխարեն ներկայացվում են սույն կետում նշված հաշվետվությունը (տեղեկությունները):

1) խմբի կառուցվածքը,

2) խմբի վերջին երեք ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները (երեք տարուց պակաս գործունեություն իրականացրած խումբը նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար) և վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունների անկախ աուդիտորական եզրակացությունը:

62. Միևնույն խմբում կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում այլ փոխկապակցված անձի կամ նշանակալից մասնակցի առկայության դեպքում, սույն կանոնակարգի 61-րդ կետով պահանջվող հաշվետվությունը (տեղեկությունները) ներկայացնում է նրանցից որևէ մեկը:

63. Եթե կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք է բերում միջազգային կազմակերպություն, ապա այն Կենտրոնական բանկ չի ներկայացնում սույն կանոնակարգի 60-րդ կետի 7-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերը: Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնությամբ սույն կետը կարող է տարածվել նաև միջազգային համբավ և (կամ) Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիտչ վարկանշող կազմակերպությունների կողմից «A-» կամ ավելի բարձր կամ Մուդիզ վարկանշող կազմակերպության կողմից «A3» կամ ավելի բարձր վարկանիշ ունեցող կազմակերպությունների վրա:

64. Ֆիզիկական անձը նոր ստեղծվող կամ գործող կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում ուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնությունն ստանալու համար համապատասխան կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի միջնորդությամբ Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) ֆիզիկական անձի կողմից կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար դիմում՝ համաձայն Հավելված 24-ի,

2) ոչ ռեզիդենտ կամ այլ երկրի քաղաքացի հանդիսացող ֆիզիկական անձի դեպքում ներկայացվում է նաև անձը հաստատող փաստաթուղթ և իր ռեզիդենտության կամ քաղաքացիության երկրի իրավասու մարմնի (դատական, վարչական կամ այլ իրավասու մարմին) կողմից տրված տեղեկանք, քաղվածք կամ այլ փաստաթուղթ, որը պետք է պարտադիր նշում պարունակի այն մասին, որ դիմելու պահին անձը դիտավորությամբ կատարված հանցագործության համար չունի օրենքով սահմանված կարգով չմարված կամ չվերացված դատվածություն և անձի նկատմամբ չկա հարուցված մասնկության վարույթ, կամ անձը դատարանի կամ այլ իրավասու մարմնի վերջնական որոշմամբ չի ճանաչվել սնանկ: Ընդ որում, սնանկ ճանաչված չլինելու հավաստման փոխարեն կարող է ներկայացվել սնանկ ճանաչված չլինելու մասին հայտարարություն, որը կատարվել է ոչ ռեզիդենտ անձի կողմից իրավասու դատական կամ վարչական մարմնի առջև կամ նոտարի մոտ՝ իր ռեզիդենտության կամ քաղաքացիության երկրում,

3) իր միջոցով անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի վերաբերյալ սույն կանոնակարգի 14-րդ գլխով սահմանված փաստաթղթերը, եթե տվյալ ֆիզիկական անձի միջոցով որևէ այլ անձ կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ է ձեռք բերում,

4) իր հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկանք՝ համաձայն սույն կանոնակարգի՝ համապատասխանաբար Հավելված 22-ի և Հավելված 23-ի:

65. Պետությունը նոր ստեղծվող կամ գործող կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնություն ստանալու համար Կենտրոնական բանկ է դիմում համապատասխան կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի միջնորդությամբ՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը՝

1) կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու դիմումը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 25-ի,

2) իր կառավարման իրավասու մարմնի որոշումը՝ տվյալ կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու մասին:

ԳԼՈՒԽ 14

ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՆԵՐ ԱՆՁԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ԱՆՈՒՐԱԿԻ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԵՌՔ ԲԵՐՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

66. Իրավաբանական անձը նոր ստեղծվող կամ գործող կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնություն ստանալու համար համապատասխան կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի միջնորդությամբ Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) նշանակալից մասնակցության ձեռքբերման նախնական համաձայնություն ստանալու դիմումը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 21-ի,

2) ոչ ռեզիդենտ իրավաբանական անձի ռեզիդենտության երկրի իրավասու մարմնի (դատական, վարչական կամ այլ իրավասու մարմին) կողմից տրված տեղեկանք, քաղվածք կամ այլ փաստաթուղթ, որը պետք է պարտադիր նշում պարունակի այն մասին, որ դիմելու պահին անձը դիտավորությամբ կատարված հանցագործության համար չունի օրենքով սահմանված կարգով չմարված կամ չվերացված դատվածություն և անձի նկատմամբ չկա հարուցված մասնկության վարույթ, կամ անձը դատարանի կամ այլ իրավասու մարմնի վերջնական որոշմամբ չի ճանաչվել սնանկ: Ընդ որում, սնանկ ճանաչված չլինելու հավաստման փոխարեն կարող է ներկայացվել սնանկ ճանաչված չլինելու մասին հայտարարություն, որը կատարվել է ոչ ռեզիդենտ անձի կողմից իրավասու դատական կամ վարչական մարմնի առջև կամ նոտարի մոտ՝ իր ռեզիդենտության երկրում,

3) իրավաբանական անձի կառավարման իրավասու մարմնի որոշումը տվյալ կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու մասին,

4) իրավաբանական անձի կանոնադրությունը՝ ոչ ռեզիդենտ նշանակալից մասնակցի դեպքում,

5) իրավաբանական անձի վերջին երեք տարիների (երեք տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձի դեպքում՝ գործունեության ողջ ժամկետի համար) և վերջին միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները և վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունների անկախ աուդիտորական եզրակացությունը,

6) իր միջոցով անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի վերաբերյալ սույն կետով սահմանված փաստաթղթերը, եթե տվյալ իրավաբանական անձի միջոցով որևէ այլ անձ կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ է ձեռք բերում,

7) իրավաբանական անձի հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկանք՝ համաձայն սույն կանոնակարգի՝ համապատասխանաբար Հավելված 22-ի և Հավելված 23-ի:

67. Եթե կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք է բերվելու միջազգային կազմակերպությունների կողմից, ապա նրանց կողմից Կենտրոնական բանկ չեն ներկայացվում սույն կանոնակարգի 66-րդ կետի 7-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերը: Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնությամբ սույն կետը կարող է տարածվել նաև միջազգային համբավ կամ Ստանդարտ և Փուլզ կամ Ֆիտչ վարկանշող

կազմակերպությունների կողմից «A-» կամ ավելի բարձր կամ Մուդիզ վարկանշող կազմակերպության կողմից «A3» կամ ավելի բարձր վարկանիշ ունեցող կազմակերպությունների վրա:

68. Ֆիզիկական անձը նոր ստեղծվող կամ գործող կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնություն ստանալու համար համապատասխան կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի միջնորդությամբ Կենտրոնական բանկի և Ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) Ֆիզիկական անձի կողմից կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար դիմում՝ համաձայն Հավելված 24-ի,

2) ոչ ռեզիդենտ կամ այլ երկրի քաղաքացի հանդիսացող ֆիզիկական անձի դեպքում Ներկայացվում է նաև անձը հաստատող փաստաթուղթ և իր ռեզիդենտության կամ քաղաքացիության երկրի իրավասու մարմնի (դատական, վարչական կամ այլ իրավասու մարմին) կողմից տրված տեղեկանք, քաղվածք կամ այլ փաստաթուղթ, որը պետք է պարտադիր նշում պարունակի այն մասին, որ դիմելու պահին անձը դիտավորությամբ կատարված հանցագործության համար չունի օրենքով սահմանված կարգով չմարված կամ չվերացված դատվածություն և անձի նկատմամբ չկա հարուցված սնանկության վարույթ, կամ անձը դատարանի կամ այլ իրավասու մարմնի վերջնական որոշմամբ չի ճանաչվել սնանկ: Ընդ որում, սնանկ ճանաչված չլինելու հավաստման փոխարեն կարող է ներկայացվել սնանկ ճանաչված չլինելու մասին հայտարարություն, որը կատարվել է ոչ ռեզիդենտ անձի կողմից իրավասու դատական կամ վարչական մարմնի առջև կամ նոտարի մոտ՝ իր ռեզիդենտության կամ քաղաքացիության երկրում,

3) իր միջոցով անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի վերաբերյալ սույն կետով սահմանված փաստաթղթերը, եթե տվյալ ֆիզիկական անձի միջոցով որևէ այլ անձ կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ է ձեռք բերում,

4) իր հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկանք՝ համաձայն սույն կանոնակարգի՝ համապատասխանաբար Հավելված 22-ի և Հավելված 23-ի:

ԳԼՈՒԽ 15

ԱՆՁԻ ԿՈՐՄԻՑ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԵՐՄԱՆ ԿԱՄ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ, ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՐՄԻՑ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԲԱԺՆԵՏՈՍՄԵՐԻ ԿԱՄ ԲԱԺՆԵՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻՆ ՏԵՂԵԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

69. Անձը, որը ձեռք է բերում նշանակալից մասնակցություն կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում կամ ավելացնում է իր մասնակցությունը Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասում նշված սահմանափակից ավելի՝ ցանկացած իրադարձության կամ գործարքի արդյունքում, որի մասին անձը տեղյակ չէր և չէր կարող տեղյակ լինել, այդ մասին տեղեկանալու պահից 10 օրվա ընթացքում տեղեկացնում է Կենտրոնական բանկին՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 26-ի:

70. Նշանակալից մասնակցից՝ Օրենքի 28-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն, 10 օրվա ընթացքում տեղեկացնում է Կենտրոնական բանկին ձեռքբերված բաժնետոմսերի կամ բաժնեմասերի օտարման մասին՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 27-ի:

ԳԼՈՒԽ 16

ՈՒՐԱՎԿԻ ԵՎ ԱՆՈՒՐԱՎԿԻ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԱԾ ԱՅԼ ԴՈՒՅԹՆԵՐ

71. Եթե կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու մտադրություն ունեցող անձի միջոցով կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք են բերում միաժամանակ մի քանի անձինք, ապա անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համաձայնություն ստանալու համար Ներկայացվում են օրենքով և սույն կանոնակարգով պահանջվող փաստաթղթերը միայն այն ֆիզիկական անձի վերաբերյալ, որի միջոցով որևէ այլ անձ այդ կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք չի բերում: Անհրաժեշտության դեպքում Կենտրոնական բանկը կարող է պահանջել փաստաթղթեր նաև այն անձանցից, որոնց միջոցով կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն է ձեռք բերվում:

72. Ուղղակի նշանակալից մասնակցի միջոցով ձեռք բերվող անուղղակի նշանակալից մասնակցության դիմումը համարվում է մերժված, եթե մերժվել է ուղղակի նշանակալից մասնակցության դիմումը: Ուղղակի նշանակալից մասնակցության դիմումը համարվում է մերժված, եթե նրա միջոցով ձեռքբերվող անուղղակի նշանակալից մասնակցության դիմումը մերժվել է:

73. Անձի և նրա հետ փոխկապակցված անձանց՝ կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն նախնական համաձայնությունը Կենտրոնական բանկի կողմից տրվում է եռամսյա ժամկետով, եթե գործողության ավելի երկար ժամկետ տվյալ որոշմամբ նախատեսված չէ: Գործարքի իրականացումը հաստատող փաստաթղթերը Ներկայացվում են Կենտրոնական բանկ: Եթե Կենտրոնական բանկի որոշմամբ սահմանված ժամկետում գործարքը չի իրականացվում կամ գործարքի իրականացումը հավաստող փաստաթղթերը չեն ներկայացվում Կենտրոնական բանկ, ապա Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը համարվում է ուժը կորցրած:

74. Եթե կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը տիրապետում է իր կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող կամ ունեցող անձանց վերաբերյալ այնպիսի տեղեկատվության, որը Կենտրոնական բանկի կողմից տիրապետելու դեպքում կարող էր հանգեցնել նշանակալից մասնակցության ձեռքբերման նախնական համաձայնություն ստանալու դիմումի մերժմանը կամ նշանակալից մասնակցության գործողության դադարեցմանը օրենքով սահմանված կարգով, ապա կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը տեղեկատվությունը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին տեղեկացնում է Կենտրոնական բանկին:

75. Եթե ուղղակի և անուղղակի նշանակալից մասնակցությունը ձեռք են բերում իրար հետ փոխկապակցված անձինք, ապա սույն կանոնակարգի 13-րդ և 14-րդ գլուխներով պահանջվող փաստաթղթերը պահանջվում են նրանցից յուրաքանչյուրից:

ԳԼՈՒԽ 17

ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻ, ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԻՐԱԿԱՆ ՀԱՅԱՌՈՒ ՅԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄԸ, ԲԱՑԱՅԱՅՏՈՒՄԸ, ՆՐԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

76. Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը, օտարերկրյա անձը պարտավոր է տիրապետել արժանահավատ տեղեկությունների իր՝ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքով սահմանված չափանիշներով կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի իրական շահառու հանդիսացող անձանց և նրանց՝ կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի, օտարերկրյա անձի իրական շահառու հանդիսանալու հիմքերի վերաբերյալ:

77. Սույն կանոնակարգի 76-րդ կետով նախատեսված տեղեկությունների բացահայտման համար կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը պարտավոր է պարբերաբար, բայց ոչ պակաս, քան տարին մեկ անգամ, իրականացնել պատշաճ ուսումնասիրություն՝ պահպանելով իրականացված ուսումնասիրությանն առնչվող բոլոր փաստաթղթերը: Իրական շահառուների հայտնաբերմանն առնչվող փաստաթղթերը ենթակա են պահպանման առնվազն հինգ տարի՝ ուսումնասիրության իրականացման պահից, բայց ոչ պակաս, քան հինգ տարի՝ սկսած այն պահից, երբ անձը, որին դրանք առնչվում են, դադարում է լինել կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի իրական շահառու:

78. Սույն կանոնակարգի 77-րդ կետով նախատեսված պատշաճ ուսումնասիրության իրականացման ընթացքում կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը պարտավոր է հարցումներով դիմել այն անձանց, որոնց իրական շահառու հանդիսանալու վերաբերյալ առկա են կասկածներ, ինչպես նաև կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի մասնակիցներին կամ մասնակից իրավաբանական անձանց ներկայացուցիչներին, որոնք կարող են տիրապետել կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների: Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձին արժանահավատ և ամբողջական տեղեկատվություն տրամադրելու պարտականությունը կրում են սույն կետով նախատեսված հարցումը ստացած անձինք:

79. Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը, օտարերկրյա անձը պարտավոր է Կենտրոնական բանկ ներկայացնել ընկերության շահառու հանդիսացող անձանց վերաբերյալ հայտարարագիր՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 28-ի:

80. Սույն կանոնակարգի 79-րդ կետով սահմանված հայտարարագիրը ենթակա է ներկայացման Կենտրոնական բանկ՝ ֆիզիկական անձի՝ կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի իրական շահառու համարվելու մասին կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի տեղեկանալու պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում:

81. Անկախ սույն կանոնակարգի 80-րդ կետով նախատեսված ժամկետներից՝ մինչև յուրաքանչյուր տարվա փետրվարի 20-ը կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը պարտավոր է Կենտրոնական բանկ ներկայացնել՝

1) հաստատում առ այն, որ իրական շահառուների վերաբերյալ Կենտրոնական բանկ ներկայացված վերջին հայտարարագրերը պարունակում են արդիական տեղեկություններ նախորդ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ, կամ

2) փոփոխված տեղեկություններ կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի իրական շահառուների վերաբերյալ:

ԳԼՈՒԽ 18

ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻ, ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԱՆՁԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐԲԵՐԱԲԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

82. Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձինք և օտարերկրյա անձանց մասնաճյուղերը նշանակալից մասնակիցների և փոխկապակցված անձանց վերաբերյալ հետևյալ հաշվետվությունները և տեղեկությունները Կենտրոնական բանկի վիճակագրական վարչություն են ներկայացնում մինչև յուրաքանչյուր տարվա հունիսի 1-ը՝ ռեզիդենտների համար, մինչև յուրաքանչյուր տարվա օգոստոսի 1-ը՝ ոչ ռեզիդենտների համար:

1) կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի, օտարերկրյա անձի կազմում նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական անձի վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները, իսկ մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում՝ իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար դրանց անկախ աուդիտորական եզրակացությունը,

2) կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի, օտարերկրյա անձի հետ փոխկապակցված իրավաբանական անձանց վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները, իսկ մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում՝ իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար դրանց անկախ աուդիտորական եզրակացությունը՝ առկայության դեպքում,

3) կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի, օտարերկրյա անձի հետ փոխկապակցված իրավաբանական անձանց ղեկավարների անունը, ազգանունը, պաշտոնը ներառող ցուցակը՝ բացառությամբ սույն կանոնակարգի 21-րդ և 31-րդ կետերով սահմանված դեպքերի,

4) կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի, օտարերկրյա անձի հետ փոխկապակցված ֆիզիկական անձանց անունը, ազգանունը ներառող ցուցակը:

83. Եթե կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի, օտարերկրյա անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական անձն ընդգրկված է որևէ խմբի կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, ապա սույն կանոնակարգի 82-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված հաշվետվությունների (տեղեկությունների) փոխարեն Կենտրոնական բանկ են ներկայացվում հետևյալ տեղեկությունները (հաշվետվությունները)։

1) խմբի կառուցվածքը,

2) խմբի վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները (մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձի դեպքում՝ գործունեության ողջ ժամկետի համար) և դրանց անկախ աուդիտորական եզրակացությունը:

84. Եթե կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի, օտարերկրյա անձի հետ փոխկապակցված իրավաբանական անձն ընդգրկված է որևէ խմբի կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, ապա սույն կանոնակարգի 82-րդ կետի 2-ին ենթակետով սահմանված հաշվետվությունների (տեղեկությունների) փոխարեն Կենտրոնական բանկ են ներկայացվում հետևյալ տեղեկությունները (հաշվետվությունները)։

1) խմբի կառուցվածքը,

2) խմբի վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները (մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար) և դրանց անկախ աուդիտորական եզրակացությունը:

85. Սույն կանոնակարգի 82-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները) Կենտրոնական բանկ չեն ներկայացվում, եթե կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական անձը հանդիսանում է Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձ՝ բացառությամբ հաշվետու թողարկողների:

86. Սույն կանոնակարգի 82-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները) Կենտրոնական բանկ չեն ներկայացվում, եթե կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի հետ փոխկապակցված իրավաբանական անձը հանդիսանում է.

1) կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձ, որի համար ներկայացվում են սույն կանոնակարգով նշանակալից մասնակցություն ունեցող անձի համար պահանջվող փաստաթղթերը (տեղեկությունները),

2) Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձ՝ բացառությամբ հաշվետու թողարկողների:

87. Սույն կանոնակարգի 86-րդ կետում սահմանված դեպքերում Կենտրոնական բանկ է ներկայացվում այդ անձանց անվանումները ներառող ցուցակ:

88. Կենտրոնական բանկը կարող է պահանջել կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձից, օտարերկրյա անձի մասնաճյուղից սույն կանոնակարգի 82-րդ կետի 2-րդ ենթակետով և 83-րդ կետով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները) սահմանված պարբերականությամբ ներկայացնել Կենտրոնական բանկ՝ նաև կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի, օտարերկրյա անձի հետ փոխկապակցված անձանց հետ փոխկապակցված իրավաբանական անձանց մասով:

89. Եթե սույն կանոնակարգի համաձայն ներկայացման ենթակա հաշվետվությունները և տեղեկությունները հայերենով, ռուսերենով կամ անգլերենով տեղակայված են ինտերնետային կայքում, ապա հաշվետվությունների կամ տեղեկությունների փոխարեն Կենտրոնական բանկ կարող է ներկայացվել համապատասխան ինտերնետային կայքի (տնային էջի) հասցեն՝ մինչև տվյալ հաշվետվությունները կամ տեղեկությունները Կենտրոնական բանկ ներկայացնելու վերջնաժամկետը: Ընդ որում, սույն կանոնակարգով սահմանված՝ պարբերաբար ներկայացվող հաշվետվությունները (տեղեկությունները) ինտերնետային կայքում (տնային էջում) տեղադրելու դեպքում իրավաբանական անձինք ապահովում են պահանջվող հաշվետվությունների (տեղեկությունների) առկայությունն առնվազն մեկ տարվա ընթացքում:

ԳԼՈՒԽ 19

ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻ, ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԱՆՁԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՏԱՄԱՐ ՊԱՅԱՆՁՆԵՐԸ

90. Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը, օտարերկրյա անձի մասնաճյուղը Հայաստանի Հանրապետության տարածքում պետք է ունենա գլխամասային տարածք, որտեղ տեղակայված

կլինի կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի գործադիր մարմինը, օտարերկրյա անձի մասնաճյուղի ղեկավարը: Ընդ որում, գլխամասային տարածքը և գործունեության այլ տարածքները պետք է լինեն առանձնացված՝ սեփականության, վարձակալության (ենթավարձակալությամբ) կամ անհատույց օգտագործման իրավունքով կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձին, օտարերկրյա անձին պատկանող: Սույն կանոնակարգի իմաստով գործունեության տարածքը ներառում է ցանկացած տարածք, որտեղ կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձն իրականացնում է որևէ գործառնություն, ներառյալ՝ փաստաթղթերի, արխիվների, սերվերների պահպանում:

91. Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձն իր գործունեության տարածքի ցանկացած փոփոխության դեպքում տեղեկացնում է Կենտրոնական բանկին տվյալ վայրում գործունեություն սկսելուց կամ դադարեցնելուց առնվազն 15 աշխատանքային օր առաջ՝ ներկայացնելով տարածքի հասցեն, կադաստրային կոդը և տվյալ տարածքում իրականացվելիք գործառնությունների հակիրճ նկարագրությունը:

ԳԼՈՒԽ 20

ԳՐԱՆՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ

92. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող՝ կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը, օտարերկրյա անձի մասնաճյուղը և ներկայացուցչությունը փոփոխությունները տեղի ունենալուց հետո տասնօրյա ժամկետում Կենտրոնական բանկի գրանցման են ներկայացնում:

1) Կենտրոնական բանկի կողմից գրանցման ենթակա ղեկավարների կազմում կատարված փոփոխությունները՝ համաձայն Կանոնակարգ 7/05-ի,

2) կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի, օտարերկրյա անձի մասնաճյուղի կանոնադրությունում կատարված փոփոխությունները, լրացումները կամ նոր խմբագրությամբ կանոնադրությունը: Ընդ որում, սույն ենթակետում սահմանված կանոնադրությունների փոփոխությունները, լրացումները պետք է ունենան սույն կանոնակարգի Հավելված 29-ով սահմանված ձևի տիտղոսաթերթ:

93. Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի, օտարերկրյա անձի մասնաճյուղի կանոնադրությունում կատարված փոփոխությունները Կենտրոնական բանկում գրանցելու համար ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

1) կատարված փոփոխությունները գրանցելու մասին միջնորդագիր՝ կառավարման իրավասու մարմնի լիազոր անձի ստորագրությամբ,

2) կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ կանոնադրությունում կատարված փոփոխությունների վերաբերյալ,

3) կանոնադրության փոփոխված դրույթները, լրացումները կամ նոր խմբագրությամբ կանոնադրությունը, ինչպես նաև կանոնադրության օրինակը ներկայացված խմբագրության ռեժիմով,

4) եթե կանոնադրության փոփոխությունը առաջացնում է լիցենզիայի, գրանցման վկայականի կամ մասնաճյուղի գործունեության թույլտվության վերաձևակերպման անհրաժեշտություն, ապա միջնորդագրում նշվում է վերաձևակերպման անհրաժեշտության վերաբերյալ, իսկ լիցենզիայի վերաձևակերպման համար ներկայացվում է նաև պետական տուրքի վճարման անդորրագիրը,

5) եթե կանոնադրության փոփոխությունը կապված է կանոնադրական կապիտալի ավելացման հետ և այն չի իրականացվում Կենտրոնական բանկում բացված կուտակային հաշվի միջոցով, ապա կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը Կենտրոնական բանկ է ներկայացնում ընդհանուր կապիտալի համալրումը հավաստող փաստաթուղթը,

6) եթե կանոնադրության փոփոխությունը կապված է գործունեության վայրի փոփոխությամբ, ապա միջնորդագրում նշվում է գործունեության նոր վայրի կադաստրային կոդը և հայտարարություն այն մասին, որ գործունեության նոր տարածքը համապատասխանում է սույն կանոնակարգի 19-րդ գլխով սահմանված պահանջներին:

94. Եթե կանոնադրության փոփոխությունը պայմանավորված է ֆիրմային անվանման փոփոխությամբ, ապա, բացի սույն կանոնակարգի 93-րդ կետում նշված փաստաթղթերից Կենտրոնական բանկ է ներկայացվում նաև ֆիրմային անվանման գրանցման հայտը և այլ պահանջվող փաստաթղթեր՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 309-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գրանցվող ֆինանսական կազմակերպությունների ֆիրմային անվանումների գրանցման հայտին ներկայացվող պահանջները, հայտի հետ ներկայացվող փաստաթղթերի ցանկը, ինչպես նաև հայտի քննարկման ու ֆիրմային անվանումների և դրա փոփոխությունների գրանցման կարգի»:

95. Փոփոխությունները գրանցվում են կամ փոփոխությունների գրանցումը մերժվում է Կենտրոնական բանկի որոշմամբ, ընդ որում, կանոնադրության փոփոխության գրանցման վերաբերյալ որոշումը ձևակերպվում է գրանցման ներկայացված փոփոխության տիտղոսաթերթի վրա Կենտրոնական բանկի նախագահի էլեկտրոնային-թվային ստորագրությունը դնելու միջոցով:

96. Գրանցման վկայականի նոր օրինակը կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձին տրամադրվում է կանոնադրությունը գրանցելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

97. Լիցենզիայի կամ մասնաճյուղի գործունեության թույլտվության նոր օրինակը հրապարակվում է Կենտրոնական բանկի կայքում՝ կանոնադրությունը գրանցելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

ԳՐԱՆՑՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

98. Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը լիցենզիա ստանալուց հետո, իսկ օտարերկրյա անձը մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեության թույլտվություն ստանալուց հետո Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փոփոխությունները՝ դրանք տեղի ունենալու օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում.

1) կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի, օտարերկրյա անձի մասնաճյուղի՝ Կենտրոնական բանկ ներկայացված՝ Օրենքի 36-րդ հոդվածով սահմանված գործունեության կանոնների փոփոխությունները,

2) կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի մասնաճյուղի, Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մասնաճյուղի կամ ներկայացուցչության կամ օտարերկրյա անձի ներկայացուցչության ղեկավարների փոփոխության ղեպքում՝ մասնաճյուղի, ներկայացուցչության ղեկավարների մասին տեղեկանք՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 15-ի,

3) կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի, օտարերկրյա անձի իրական շահառու հանդիսացող անձանց վերաբերյալ Կենտրոնական բանկ ներկայացված տեղեկությունների փոփոխությունների ղեպքում՝ տվյալ փոփոխությունները ներառող հայտարարագիրը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 28-ի,

4) կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի, օտարերկրյա անձի ապակենտրոնացված գրանցամատյանում բացված հասցեների փոփոխությունների ղեպքում՝ տվյալ փոփոխությունները ներառող տեղեկանքը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 10-ի:

99. Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը, օտարերկրյա անձի մասնաճյուղը Կենտրոնական բանկ է ներկայացնում գործարար ծրագրի փոփոխված տարբերակը՝ փոփոխությունը տեղի ունենալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում, եթե տեղի է ունեցել կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի, օտարերկրյա անձի մասնաճյուղի գործունեության ռազմավարության փոփոխություն: Վերանայված ծրագրում նշվում է ռազմավարության փոփոխության հիմնավորումը:

Հավելված 1

«Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի գրանցումն ու լիցենզավորումը, օտարերկրյա կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի մասնաճյուղի և ներկայացուցչության գործունեության թույլտվության տրամադրումը, կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնությունն ստանալու կարգը» Կանոնակարգ 7/01-ը Հավելվածի

Կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցման լիցենզիա թիվ _____
Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի լրիվ ֆիրմային անվանումը՝ _____

Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձին թույլատրվող ծառայությունները

----- տրված է՝ -----
----- տրված է՝ -----
----- տրված է՝ -----
----- տրված է՝ -----
----- տրված է՝ -----
----- տրված է՝ -----
----- տրված է՝ -----
----- տրված է՝ -----
----- տրված է՝ -----
----- տրված է՝ -----

Գրանցման համարը _____
Տրված՝ _____

Սույն փաստաթղթի վավերականությունը կարող է ստուգվել www.cba.am կայքում կամ QR code-ը սկանավորելու միջոցով

QR code

Հավելված 2

«Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի գրանցումն ու լիցենզավորումը, օտարերկրյա կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի մասնաճյուղի և ներկայացուցչության գործունեության թույլտվության տրամադրումը, կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնությունն ստանալու կարգը» Կանոնակարգ 7/01-ը Հավելվածի

Մասնաճյուղի գործունեության թույլտվություն թիվ _____
Օտարերկրյա կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի մասնաճյուղի լրիվ ֆիրմային անվանումը՝ _____

Օտարերկրյա կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի մասնաճյուղին թույլատրվող ծառայությունները

----- տրված է -----
 ----- տրված է -----
 ----- տրված է -----
 ----- տրված է -----
 ----- տրված է -----
 ----- տրված է -----
 ----- տրված է -----
 ----- տրված է -----
 ----- տրված է -----

Գրանցման համարը _____
 Տրված՝ _____

Սույն փաստաթղթի վավերականությունը կարող է ստուգվել www.cba.am կայքում կամ QR code-ը սկանավորելու միջոցով

QR code

Հավելված 3

«Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի գրանցումն ու լիցենզավորումը, օտարերկրյա կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի մասնաճյուղի և ներկայացուցչության գործունեության թույլտվության տրամադրումը, կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնությունն ստանալու կարգը» Կանոնակարգ 7/01-ը Հավելվածի

ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎ

Գրանցված է

ՀՀ կենտրոնական բանկի
 ---- թվականի թիվ --- որոշմամբ



ՀԱՅԱՍՏԱՆԻ
 ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

**ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐՈՎ
 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ
 ՄԱՏՈՒՑՈՂ
 ԱՆՁԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ**

Ք. ԵՐԵՎԱՆ

ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ թիվ ---

Համաձայն «Կրիպտոակտիվների մասին» և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների՝ սույն վկայականը տրվում է

(անվանումը, կազմակերպական-իրավական տեսակը, գտնվելու վայրը)

-----կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձին առ այն, որ այն գրանցված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում:

Գրանցման համարը _____

Գրանցման ամսաթիվ, ամիս, տարեթիվ _____
 Հարկ վճարողի հաշվառման համարը _____

Հայաստանի Հանրապետության
 կենտրոնական բանկի նախագահ _____

..... 20 ... թ.

Հավելված 4

«Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի գրանցումն ու լիցենզավորումը, օտարերկրյա կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի մասնաճյուղի և ներկայացուցչության գործունեության թույլտվության տրամադրումը, կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնությունն ստանալու կարգը» Կանոնակարգ 7/01-ը Հավելվածի

Ներկայացուցչության գործունեության թույլտվություն թիվ _____
 Օտարերկրյա կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի ներկայացուցչության լրիվ ֆիրմային անվանումը՝ _____

QR code

Գրանցման համարը _____

Տրված՝ _____

Սույն փաստաթղթի վավերականությունը կարող է ստուգվել www.cba.am կայքում կամ QR code-ը սկանավորելու միջոցով

Հավելված 5

«Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի գրանցումն ու լիցենզավորումը, օտարերկրյա կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի մասնաճյուղի և ներկայացուցչության գործունեության թույլտվության տրամադրումը, կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը» Կանոնակարգ 7/01-ը Հավելվածի

ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՇՈՂ ԱՆՁԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԴԻՄՈՒՄ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
_____ -ին

Հարգելի _____

Մենք(ես)՝ _____

(Դիմորդի անվանումը և կազմակերպական-իրավական ձևը)

ստեղծումը նախաձեռնող ներքոստորագրյալներս (ներքոստորագրյալս), որոշում ենք (եմ) կայացրել կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի պետական գրանցման և կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցման լիցենզիա ստանալու մասին:

Խնդրում ենք (եմ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցել կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձին և տրամադրել ստորև նշված կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցման լիցենզիա.

- ☐ 1 կրիպտոակտիվների առևտրային հարթակի գործարկում
- ☐ 2 կրիպտոակտիվների պահառություն
